

ՄԱՐՄԻՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

Որքան սիրտը, հոգին ու միտքը նորոգութեան կարիքը ունին, նոյնքան եւ աւելի՛ մարմինը, որովհետեւ, նոյնիսկ եթէ մեր միտքը ընդունի Քրիստոսի սիրոյ Օրէնքը, դարձեալ կրնայ յարձակումի ենթարկուիլ ու պատերազմի մարտահրաւեր ստանալ մեր մարմինին անդամներուն մէջ գտնուող մեղքի օրէնքէն (Հն. 7.23):

Մարմինը միշտ պայքարի մէջ պիտի ըլլայ մեր միտքին ու հոգիին դէմ, այնքան ատեն, որ չէ մեռած մեղքի համար, իսկ այս մեռուցումը Ս. Հոգիին օգնութեամբ տեղի կ'ունենայ (Հն. 8.13): Սուրբ Հոգին ինքն է, որ կ'օգնէ մեզի մեռցնելու մեր մարմիններուն մէջ աշխարհիկ ցանկութիւնները, որոնք կը պղծեն մեր մարմինները, որոնք տաճարն են Սուրբ Հոգիին (Ա. Կր. 6.19): Մաքուր պահենք Սուրբ Հոգիին տաճարը՝ մեր մարմինները: Պղծութիւն չգործենք մեր մարմիններով մենք, որ կոչուած ենք սրբութեան տալու մեր մարմինները եւ արդարութեան ծառայելու (Հն. 6.19): Չարին անդամները, որոնք Քրիստոսի անդամներն են (Ա. Կր. 6.15): Թոյլ չտանք, որ մեղքը թագաւորէ մեր մարմիններուն մէջ, որոնց մէջ Քրիստոս ինք կոչուած է թագաւորելու (Հն. 6.12): Չապրինք այնպէս, որ Մատանան փառաւորուի մեր մարմիններով, մենք որ կոչուած ենք զԱստուած փառաւորելու մեր մարմիններով (Ա. Կր. 6.20): Մեղքի զգեստով չծածկենք մեր մարմինները, որոնք կոչուած են եհտնային մարմինը առնելու իրենց վրայ (Բ. Կր. 5.2): Յարգը գիտնանք մեր մարմիններուն, որոնք պիտի կենդանանան (Հն. 8.23) ու որդեգրուին (Հն. 8.23):

ԽԱՉՔԱՐ



Խաչքարը իւրայատուկ է Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդին:

Քարին վրայ փանդակուած խաչն է ան, որ անցեալին յատկապէս եկեղեցիներուն եւ վանքերուն շուրջ գտնուող գերեզմանները կը զարդարէին, որպէս դաբանաբար:

Խաչքար փանդակելու արուեստը այնքան զարգացած է Հայաստանի մէջ, որ նկարագրային բնոյթ եւ մասնաւոր դիմագիծ տուած է հայ ժողովուրդին:

Խաչքարերու գեղեցկագոյնները կը պատկանին Մոմիկ մեծ վարդապետին, որուն ստեղծագործ համնարէն եւ նարտար գրիչէն ծնունդ առած են այնպիսի խաչքարեր, որոնք կարծես քարին վրայ ասեղնագործուած մետաքսայ կերպասներ ըլլային:

Խաչքարերը այսօր լոկ գերեզմանաքարեր չեն, այլ արուեստի գործ՝ գեղեցիկ յուշարձաններ, որոնց մեմօ կը հանդիպինք եկեղեցիներու որմերուն վրայ, որպէս յուշակոթող, կը տեսնենք եկեղեցիներու շրջափակին կամ մշակութային կեդրոններուն մէջ, որոնք յիշուի հայ մշակոյթին եւ փանդակագործութեան փառքը կը ներբողեն:

Օտարներ մեծ հիացմունքով կը գնահատեն խաչքարերու արուեստը:

ՀԱՍՅԷ.



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Առ 3.18-26: Ես 65. 22-25: Գղ. 6.14-18:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.30-36

ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱՉԻՆ

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.30-36

Ապա մարդու Որդիին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած գորութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծածայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛գեմին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ մարդու Որդիին զալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, իսօքերս պիտի չանհետանան:

Մակայն ոչ ոք գիտէ, թէ երբ պիտի գայ այդ օրը կամ ժամը: Ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց միայն Հայրը:

Ո՛՞չ ոք գիտէ թէ ե՛րբ ՊԻՏԻ ԳԱՅ ԱՂԴ ՕՐԸ ԿԱՄ ԺԱՄԸ: Ո՛՞չ երկինքի ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ, Ո՛՞չ ԻՍԿ ՈՐԴԻՆ, ԲԱՅՉ ՄԻԱՅՆ ՀԱՅՐԸ:

Մեզմէ կը պահանջուի սիրելի հաւատացեալ ընթերցող արթուն եւ պատրաստ ըլլալ ինչպէս Յիսուս կ'ըսէ: Արթուն եւ պատրաստ ըլլալ հոգիով, աղօթքի ճամբով: Ամէնօրեայ աղօթքը կարելոր անհրաժեշտութիւն է, հոգեւոր սնունդ է: Ինչպէս մեր մարմինը նիւթական սնունդի կարիքը ունի, նոյնպէս մեր հոգին հոգեւոր սնունդի՝ հացի կարիքը ունի: Ամէնօրեայ աղօթքն է այդ հոգեւոր հացը, որուն միջոցաւ մեր հաւատքը կը զօրանայ եւ այն ատեն մենք արթուն եւ պատրաստ պիտի ըլլանք դիմաւորելու Տէրը:

Ըստ եկեղեցւոյ աւանդութեան, սուրբ Հոսիսիմեանց կոյսերը Դիոկղե-տիանոս կայսեր (243-31) կողմէ կը հալածուին կու գան Հայաստան եւ կ'ապաստանին Վարազայ լեռան լանջին: Սուրբ Հոսիսիմէ իր վիզին կը կրէր Քրիստոսի խաչափայտէն մասունք մը՝ որ ստացած էր ժառանգաբար Կլավտիոս կայսեր տիկնոջ՝ Պատրոնիկէ թագուհիին կողմէ:

Հայաստանի մէջ Հոսիսիմեանց կոյսերը հալածանքի կ'ենթարկուին եւ այդ պատճառով ալ Սուրբ Հոսիսիմէն իր խաչը կը պահէ Վարազայ լեռան մէկ քարայրին մէջ: Հայաստանի մէջ միշտ գիտէին թէ այդ խաչը պահուած է Վարազայ լեռան վրայ, բայց չէին գիտեր թէ ուր:

653 թուին այդ լեռան վրայ իրենց նգնութիւնը կ'ընեն Թոդիկ նգնաւորը եւ իր աշակերտը՝ Հովել, օրն ի բուն աղօթելով եւ խնդրելով Աստուծմէ, որ ձեռով մը Աստուած իրենց յայտնէ Խաչին վայրը: Հայր Աստուած, որ միշտ կ'ուզէ զինք հաւատացողներուն խնդրանքները իրականացնել, օր մը լոյսի տեսիլով 12 սիւներու մէջտեղէն վեր կ'անջատէ Սուրբ Նշանը՝ խաչը որ կու գայ դէպի սուրբ խորանը, ուր կ'աղօթէին երկու նգնաւորները: Նոյն ատեն կը լսուի ձայն մը, որ կ'ըսէ. «Քրիստոս հանեցաւ բնակիլ Սուրբ Խաչին մէջ, ի պահպանութիւն եւ փրկութիւն հայոց աշխարհին»:

Լուսեղէն սիւները 12 օրեր շարունակ կ'երեւին Վարազայ լեռան Գալիլիա կոչուող գագաթին վրայ, այնպէս մը որ ամէն մարդ կրնար տեսնել զանոնք:

Հոգեւորականներ եւ իշխաններ, հայոց Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի եւ Ռշտունեաց Վարդ Ռշտունի սպարապետի գլխաւորութեամբ կու գան Վարագ՝ սուրբ Խաչին երկրպագելու: Ներսէս հայրապետը սուրբ Խաչի երեւումը տօն կը հռչակէ, 12 լուսեղէն սիւներու երեւցած տեղը եկեղեցի կը շինէ, եւ ուր որ իջած էր սուրբ Խաչը կը մեծցնէ եւ աւելի փառաւոր կը կառուցէ:

Այս առիթով կը գրուի նաեւ «Նշանաւ ամենայաղօ խաչիւղ քով Քրիստոս» շարականը եւ մինչեւ Վարագայ սուրբ խաչի տօնը կը սահմանուի 5 օրեայ շաբաթապահք, որ ժողովրդական լեզուով կը կոչուի «Վանեցիների»:

Վարագայ լեռան գագաթին եւ ստորոտին կը հիմնուին վերին եւ ներքին եկեղեցիները, որոնցմէ աւելի ծանօթ է ներքին Վարագավանքը, ուր կը պահէր խաչափայտի մասունքը մինչեւ 1021, երբ Սենեքերիմ Արծրունի Վասպուրականի թագաւորութիւնը կը յանձնէ Բիւզանդիոնի, կը տեղափոխուի Սեբաստիա եւ իր հետ կը տանի նաեւ սուրբ Նշանը, սակայն քիչ ետք 1026-ին սուրբ Նշանը կը վերադարձուի Ներքին Վարագավանք: 11-րդ դարուն, Աշոտ Դ. Բագրատունի սուրբ Նշանին համար շինել կու տայ ոսկեայ տուփ մը եւ 1237-ին կը տեղափոխուի նոր Վարագավանք: Ասկէ ետք 1651-ին կը տարուի Խոշար, 1655-ին կը դրուի Վանի սուրբ Տիրամայր եկեղեցւոյ մէջ, որուն պատճառաւ ալ եկեղեցին կը վերանուանուի Սուրբ Նշան անունով: Մաղափա Օրմանեան պատրիարքը (1841-1918) իր «Ծիսական բառարան»ին մէջ կը վկայէ, որ իր օրով սուրբ խաչը տակաւին կը մնար Վանի Սուրբ Նշան եկեղեցւոյ մէջ, սակայն Մեծ Եղեռնէն ետք անոր գտնուած վայրը անյայտ է:

Սուրբ Խաչին կը վերագրուին բազմաթիւ հրաշքներ, մանաւանդ Եղեսիոյ համաճարակի ժամանակ, երբ Վարագայ Սուրբ Խաչի գորութեամբ կանգ առած է համաճարակը:

Ագաթանգեղոսի վկայութեամբ, հայոց երկնակամարին վրայ լուսեղէն սուրբ խաչը երեւցած է նաեւ սուրբ Գրիգոր Լուսաւորիչի, ինչպէս նաեւ սուրբ Մեսրոպ Մաշտոցի յուղարկաւորութեան ժամանակ Վաղարշապատէն մինչեւ Օշական՝ ըստ Մովսէս Խորենացիի վկայութեան:

Վարագայ Սուրբ Խաչը կը տօնուի Խաչվերացէն 15 օր ետք, այսինքն Սեպտեմբեր 25-էն մինչեւ Հոկտեմբեր 1-ի գուգադիպող Կիրակի օրը:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՈՉ ՀԱՆԳԻՍՏԸ ԵՒ ՈՉ ԱՂ ԱՆՀԱՆԳԻՍՏԸ ԹՈՂ ՔԵՉ ՏԱՐԱՎՅՆԵՆ ԿԱՄ ԹՈՒՂՅՆԵՆ

Խաչեալին զինուորը հաւատարիմ մարդն է: Հաւատարիմ՝ իր Չօրավարին կամքին, խօսքին ու խոստումին: Մեր հաւատարմութիւնը հանդէս կու գայ, երբ հանգիստ պայմաններու կը հանդիպինք, ինչպէս նաեւ երբ լուրջ նեղութիւններ կը դիմագրաւենք: Լուրջ փորձութիւններն են, որ կը փաստեն էթէ երբեք մենք լուրջ հաւատացեալներ ենք, հաւատարիմ զինուորներ ենք: Զինուոր մը կրնայ ընկրկիլ եւ դասալիք ըլլալ երկու պարագաներու տակ, առաջին, երբ պատերազմը կը սաստկանայ եւ վտանգը անխուսափելի կը դառնայ, եւ երկրորդ, երբ հանգիստ պայմաններով կը շրջապատուի: 144 Մնայուն հանգիստը կրնայ զինք թուլցնել ու թմրեցնել, իսկ ծանր ու բուռն պատերազմը կրնայ նահանջի մատնել զայն:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Միքելի զինուորը Քրիստոսի, մի թոյլ տար, որ հանգիստը քեզ թուլցնէ, կամ անհանգստութիւնը՝ տկարացնէ:

ԱՌԱԿԱՅ (Գ. 23, 19-25)

*Որդեա՛կ իմ, լսէ՛ ու իմաստուն ն եղի՛ր եւ քու սիրող դէպի ուղիդ ճամբան շտկէ՛: Մի՛ ընկերանար գինեմոլ ներու ն ու իրենց մարմինը մաշող ներու ն, վասնզի գինեմոլ ն ու շրոայլը աղքատ կ'ըլլան եւ շատ քու նը՝ պատուած հանդերձ-ներ կը հագցնէ:*

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԱՍՏՈՒՄՅՈՒ ԿԷ ՆԱԽԱՆՏՆԱՍԷ ՈՒ ԿԷ ՀՈՎԱՅ ԲՈՒՈՐ ԱՐԱՐԱՃՆԵՐԸ, ԿԱՐԿՎ.՝ ՍԱՂՄՈՍ 36

Ամբարիշտին սրտին խորը բոյն դրած մեղքը կը յայտարարէ, թէ իրեն համար Աստուծոյ վախը գոյութիւն չունի: Այդպիսի կեղծ խօսքերով ամբարիշտը ինքզինք կ'օրօրէ, փոխանակ իր անօրէնութիւնը խոստովանելու եւ գայն ատելու: Անօրէն եւ ինքզինք խաբող խօսքեր, որոնցմով ան կը լքէ իմաստութիւնը եւ բարի գործերը: Պակած տեղը անօրէնութիւն կը խորհի, բարի քամբուն չի հետեւիր, եւ չարէն չի հեռանար: Դո՛ւն է, որ կը հոգաս մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէ՛ր: Ի՛նչ թանկագին է հոգածութիւնը, ո՛րվ Աստուած բոլոր մարդիկ քու թեւերուդ հովանիին կ'ապարկին: Քու տանարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհներու քու գետեղ խմել կու տաս դուն անոնց: Որովհետեւ դո՛ւն եւ կեանքի աղբիւրը, լոյսովդ է, որ մենք լոյսը կը տեսնենք: Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք քեզ կը նանչնան, եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են: Թոյլ մի՛ տար որ ամբարտաւան մարդիկ ընկնեն զիս, չարագործները յաջողին զիս հալածէ: Հոն՝ պիտի իյնան բոլոր անոնք՝ որոնք անօրէնութիւն կը գործեն. պիտի տապալին եւ ա՛լ բնաւ չկանգնին: